

ԱԳՆԵՍԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի միջազգային և
եվրոպական իրավունքի ամբիոնի հայցորդ

**ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԱՆՁՆԱԿԱՆ
ԵՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԿԻԼԻԿԻԱՅԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ՎԵՆԵՏԻԿԻ ԵՎ ՋԵՆՈՎԱՅԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ**

XIII դարի երկրորդ կեսին և XIV դարի առաջին կեսին խիստ բարձրացավ Կիլիկիայի հայկական թագավորության նավահանգիստների, շուկաների և տարանցիկ ճանապարհների դերը ժամանակաշրջանի միջազգային առևտրում: 1258թ. սոնդոյների կողմից Բաղդադի գրավմամբ իրենց նշանակությունը կորցրին սիրիական նավահանգիստներ հասնող հարավային ուղիները, և սկսեց զարգանալ Թավրիզ-Այաս քարավանային ճանապարհը: Այսպես դարձավ տարածաշրջանում Արևելքի և Արևմուտքի միջև առևտրական գործունեության գլխավոր նավահանգիստներից մեկը: Կիլիկիայի դերի բարձրացումը միջազգային առևտրում նպաստում էր, որպեսզի ավելի շատ օտարերկրյա վաճառականներ ժամանեն թագավորություն, որոնց մեջ զգալի թիվ էին կազմում Արմտյան Եվրոպայից, մասնավորապես իտալական քաղաքներից եկածները:

Կիլիկիայի հայկական պետության միջազգային առևտրական կապերի զարգացումը ավելի ու ավելի էր մեծացնում Կիլիկիա ժամանող օտարերկրացիների կարգավիճակի բարելավման անհրաժեշտությունը: Ինչպես հայտնի է, միջնադարյան Եվրոպայում և Ասիայում գործող մի շարք սովորույթներ անտեսում էին օտարերկրացիների իրավունքները, որևէ կերպ պաշտպանված չէր վերջիններիս անձի և սեփականության անձեռնմխելիությունը: Օտարերկրացիների անպաշտպանությունը դժվարություններ էր ստեղծում նախ և առաջ վաճառականների համար՝ այլ երկրներում իրենց առևտուրն իրականացնելիս: Թերևս այս հանգամանքի բերումով օտարերկրացիների իրավունքների պաշտպանության խնդիրն առավել հաճախ էր արժանանում պետությունների միջև կնքվող առևտրական համաձայնագրերում:

Կիլիկյան պետությունն իր ժամանակաշրջանի միջազգային հարաբերություններում տիրող անկարգության պայմաններում չէր կարող պաշտպանել Կիլիկիա ժամանող բոլոր օտարերկրացիների իրավունքները՝ անտեսելով փոխադարձ շահավետության սկզբունքը: Կիլիկիայի թագավորություն ժամանող օտարերկրացիներից առավել լայն իրա-

վունքներով էին օժտված Կիլիկիայի հետ ամենից վաղ առևտրական կապեր հաստատած ջենովացիները և վենետիկցիները, որոնք, լինելով միջերկրածովյան առևտրի գլխավոր դերակատարներ, Եվրոպայի և Ասիայի միջև առևտրական փոխանակության գլխավոր միջնորդներ, մեծապես նպաստում էին Կիլիկյան պետության ներքին և արտաքին առևտրի զարգացմանը: Դատելով մեզ հասած իրավական աղբյուրներից՝ Կիլիկիայի հայկական թագավորության առաջին առևտրական համաձայնագրերը կնքվել են հենց Ջենովայի և Վենետիկի հանրապետությունների հետ, որոնց հիման վրա լայն արտոնություններ են շնորհվել Կիլիկիա ժամանող վերջիններիս հպատակներին¹:

Միջնադարյան Եվրոպայում և Ասիայում որևէ երկիր մտնելու և այնտեղ մնալու համար օտարահպատակը պետք է համապատասխան թույլտվություն ունենար, հակառակ դեպքում ապահովված չէր տեղական ֆեոդալի կամայական գործողություններից և մինչև անգամ կարող էր նրա կողմից ստրկացվել: Եթե օտարահպատակը մահանում էր մեկ այլ երկրի տարածքում, ապա նրա գույքը ժառանգում կամ յուրացնում էր ֆեոդալը²: Օտարերկրացիների համար մեկ այլ խնդիր էր ստեղծում «ափամերձ իրավունքը»: Դեռ հնուց «ափամերձ իրավունքը» հասկացվում էր որպես նավաբեկության արդյունքում օտար պետության ափամերձ գոտում հայտնված կամ ափ նետված նավի, նավի մնացորդների, նավաբեռի, նավի անձնակազմի և ուղևորների նկատմամբ ափատիրոջ իրավունքը՝ տնօրինելու այդ ամենն ըստ իր հայեցողության: Սովորաբար գույքն առգրավվում էր ափատիրոջ կողմից, իսկ կենդանի մնացած մարդիկ գերևարվում էին կամ ստրկացվում, հաճախ վերջիններիս դիմաց պահանջվում էր փրկագին³: Կիլիկյան թագավորությունում ևս օտարերկրացիներն առանց թագավորի հատուկ թույլտվության երկիր ազատ մուտք գործելու, այնտեղ մնալու և երկրից դուրս գալու իրավունք չունեին: Հետևաբար, օտարերկրյա պետություններին շնորհված արքայական խրիստովներում նախ և առաջ սահմանվում էր օտարերկրացիների անձի և սեփականության անձեռնմխելիությունը Կիլիկիա

www.lawinstitute.am

Ժամանելու, այնտեղ մնալու և երկրից դուրս գալու դեպքում: Այսպես, 1201թ. մարտին Լևոն II-ի կողմից Ջենովայի Հանրապետությանը շնորհված խրիստովույուն ասվում է. «Ուստի և քեզ՝ Օգեթիո դը Պալլոյի, Ջենովայի քաղաքացուդ, որ ջենովացիների կողմից եկել ես իմ արքայական կուրիայի մոտ, իմ արքայական մեծության մոտ և ազատություններ, սեր ու հարգանք ես փնտրում իմ թագավորության մեջ, իմ արքայական կուրիայի համաձայնությամբ ազատություն եմ տալիս ցամաքով ու ծովով ժամանելուն և մեկնելուն, առք ու վաճառքին, նավահանգիստ մտնելուն և նավահանգստից դուրս գալուն: Շնորհում եմ և կամենում, որ բոլոր ջենովացիներն իրենց իրերով ու ապրանքներով իմ ամբողջ թագավորության մեջ՝ քաղաքներում, գյուղերում և իմ ողջ տարածքում, որ այժմ ունեն և որն ինձ է տրվել որպես Աստծո պարգև, և իմ բարոնների ողջ տարածքում վնասներ չկրեն և վտանգի չենթարկվեն այն բոլոր մարդկանց կողմից, ովքեր գտնվում են և գտնվելու են իմ թագավորական իշխանության ներքո և իմ տիրույթներում, գնան ու վերադառնան, վաճառեն և գնեն ազատ ու հանգիստ կերպով, առանց արգելքների և ճնշումների, տուրքերի ու հարկերի»⁴:

1201թ. դեկտեմբերին Լևոն II-ի կողմից Վենետիկին տրված խրիստովույուն և սահմանվում էր վենետիկցիների՝ Կիլիկիա ազատ ժամանելու, այնտեղ մնալու և երկրից դուրս գալու իրավունքը՝ իրենց պատկանող գույքի հետ միասին: Այդ իրավունքը ձևակերպված էր հետևյալ կերպ. «Ուստի, իմ արքայական առատաձեռնությամբ, նրա (Վենետիկի դոժի) խնդրանքով, շնորհում եմ և նվիրում նրա ժառանգներին և բոլոր վենետիկցիներին, ի նշան նրա և վենետիկցիների հանդեպ իմ տաժած սիրո և հարգանքի, որն արտացոլվել է այս արտոնագրում, ազատություն ցամաքում և ծովում, քաղաքներում, նավահանգիստներում և անցումային կետերում, կարող են գալ ու գնալ ցանկացած ապրանքով: Նրանք իրավունք են ստանում գնել և վաճառել ցանկացած ապրանք իմ ողջ տարածքում, իմ տիրույթներից դուրս գալ անվտանգ, ապահով, հանգիստ կերպով, առանց ճնշումների և խոչընդոտների, տուրքերի և հարկերի... Վենետիկցիներն իրենց պատկանող իրերի ու ապրանքների հետ միասին չպետք է վնասներ կրեն և վտանգի ենթարկվեն այն բոլոր մարդկանց կողմից, ովքեր գտնվում են և գտնվելու են իմ իշխանության ներքո և իմ տիրույթներում... Շնորհում եմ և կամենում, որ բոլոր վենետիկցիներն իրենց ապրանքների հետ միասին անվտանգ և ապահով կերպով իմ տիրույթներում մնան այնքան ժամանակ, որքան որ իրենք կցանկանան»⁵:

Նույն ոգով է կազմված նաև Հեթում I-ի և Չարելի թագուհու կողմից 1245թ. մարտին Վենետիկին շնորհված խրիստովույունը. «Մենք հաստատեցինք նրանց (վենետիկցիների)՝ արտոնություններ ստանալու խնդրանքը և շնորհեցինք բոլոր վենետիկցիներին, ովքեր հիմա կան և դեռ գալու են, բոլոր այն վենետիկցի վաճառականներին և վենետիկցիներին, ովքեր գտնվում են ծովի այս կողմում, որպեսզի, մեր երկիր ժամանելիս, վնասներ չկրեն և վտանգի չենթարկվեն մեր և բոլոր նրանց կողմից այն բոլոր վայրերում, որոնք գտնվում են կամ գտնվելու են մեր իշխանության ներքո, որպեսզի նրանք իրենց ապ-

րանքներով գան ու գնան, գնեն և վաճառեն առանց տուրքերի»⁶:

Բացի վերոնշյալ իրավունքներից, այս խրիստովույունում սահմանվում էր նաև Կիլիկիայի տարածքով վենետիկցիների ազատ տարանցման իրավունքը: Վենետիկցի վաճառականներին թույլատրվում էր Կիլիկիայի տարածքով անարգել կերպով և ցանկացած տեսակի ապրանքներով անցնել մեկ ուրիշ պետություն, որի հետ Կիլիկիան հաշտ էր:

Վերոնշյալ դրույթները կրկնվում են նաև Վենետիկին տրված 1261թ., 1271թ., 1307թ., 1323թ. խրիստովույուններում:

Ինչպես արդեն նշվեց, քննության առնվող ժամանակաշրջանում կարևորություն ունեն «ափամերձ իրավունքի» հետ կապված իրավակարգավորումները: Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Վենետիկի և Ջենովայի հետ Կիլիկիայի կնքած համաձայնագրերում առկա «ափամերձ իրավունքին» վերաբերող դրույթները, որոնք ուղղված էին նավաբեկության ենթարկված վենետիկցիների և ջենովացիների անձի և սեփականության անձեռնմխելիության ապահովմանը: Այս առնչությամբ 1201թ. Լևոն II-ի կողմից ջենովացիներին շնորհված խրիստովույուն ասվում է. «Բացի այդ շնորհում եմ և կամենում, որ եթե ջենովական նավերը իմ թագավորության ծովափերին վտանգվեն կամ նավաբեկության ենթարկվեն, ապա այն ամենն, ինչ կարող է փրկվել՝ նրանց նավը, իրերն ու ապրանքները, չպետք է վնասներ կրեն և վտանգի ենթարկվեն այն բոլոր մարդկանց կողմից, ովքեր գտնվում են և գտնվելու են իմ թագավորական իշխանության ներքո և իմ տիրույթներում, և ջենովացիներին պատկանող ունեցվածքը պետք է առանց խոչընդոտների նրանց վերադարձվի: Եթե իմ թագավորության ծովափերին վտանգվեն կամ նավաբեկության ենթարկվեն այլ ազգային պատկանելության նավեր, իսկ այդ նավերում գտնվեն ջենովացիներ իրենց ապրանքների հետ միասին, ապա այն իրերն ու ապրանքները, որոնք օրենքով ջենովացիներին են պատկանում և եթե դա նրանք կարողանան ապացուցել, պետք է անվնաս և ապահով մնան, և ջենովացիներին պատկանող գույքը պետք է առանց խոչընդոտների նրանց վերադարձվի»⁷:

1201թ. դեկտեմբերին Լևոն II-ի կողմից Վենետիկին շնորհված խրիստովույուն «ափամերձ իրավունքին» վերաբերող դրույթները ընդհանուր առմամբ համընկնում են Ջենովային տրված խրիստովույուն դրույթների հետ, թեև այստեղ արձանագրվում են նոր մանրամասներ: Այսպես, եթե նավաբեկության ենթարկված վենետիկյան նավի վրա գտնվում էին անձիք, ովքեր վենետիկցիներ չէին, ապա վենետիկյան դրոշը չէր կարող պաշտպանել վերջիններին. «Շնորհում եմ նաև և կամենում, որ այն դեպքում, եթե վենետիկյան նավը իմ թագավորության ծովափերին վնասվի կամ նավաբեկության ենթարկվի, ապա բոլոր նրանք, ովքեր խույս կտան վտանգից, պետք է ազատ և ապահով լինեն: Նրանք իրենց իրերի և ապրանքների հետ միասին պետք է ազատ լինեն և վնասներ չկրեն այն բոլոր մարդկանցից, ովքեր գտնվում են և գտնվելու են իմ թագավորական իշխանության ներքո և իմ տիրույթներում, բացառությամբ այն դեպքերի, երբ նավի վրա գտնվեն վենետիկցի

չհանդիսացող անձիք, որոնց ողջ ունեցվածքը կենթարկվի իմ արքայական կուրիա իշխանությանը: Եթե իմ թագավորության ասիերի մոտ վտանգվի կամ նավարկության ենթարկվի այլ ազգային պատկանելության նավ և, եթե այդ նավի վրա գտնվի վեներտիկցի, ապա նրա իրերն ու ապրանքները պետք է անվնաս և ապահով մնան և ազատ լինեն այն բոլոր մարդկանցից, ովքեր գտնվում են և գտնվելու են իմ թագավորական իշխանության ներքո և իմ տիրույթներում»⁸:

1245թվ. Վենետիկին շնորհված խրիստովուլում կատարվում են նոր լրացումներ: Այստեղ շեշտվում է այն, որ ոչ մի վենետիկցի չպետք է որպես իր սեփականություն ներկայացնի վենետիկցի չհանդիսացող անձանց նավերը և գույքը՝ դրանք ազատելու նպատակով:

Կիլիկյան պետության կողմից նորամուծություն էր նաև Լևոն III-ի՝ 1271թ. խրիստովուլում տեղ գտած այն դրույթը, ըստ որի նավարկության ենթարկված վենետիկյան նավի վրա գտնվող, սակայն վենետիկցի չհանդիսացող անձիք և նրանց գույքը հայտնվում են Վենետիկի և Կիլիկիայի համատեղ կառավարման ներքո, ինչը կրկնվում է նաև 1307թ. և 1323թ. խրիստովուլներում. «Եթե վենետիկյան նավը նավարկության ենթարկվի մեր տարածքում, ծովափերին կամ ծովում, ապա այն ամենն, ինչ կփրկվի ծովից՝ լինեն մարդիկ, նավը կամ այլ տեսակի իրեր, ապահով կլինեն, և վնասներ չեն կրի մեր և մեր հպատակների կողմից: Եթե նավարկության ենթարկված նավի վրա գտնվեն այլ ազգային պատկանելության անձիք և ապրանքներ, ապա նրանք կհայտնվեն մեր՝ նրանց հետ համատեղ կառավարման ներքո: Վենետիկցիները չպետք է իրենց պաշտպանության ներքո վերցնեն այլազգի անձանց նավն ու ապրանքները կամ ազատեն դրանք որպես իրենցը: Այն դեպքում, եթե նավարկության ենթարկվի այլ ազգության պատկանող նավ, որոնց վրա կլինեն վենետիկցիներ, ապա վենետիկցիները ազատ կարձակվի և նրա համար ոչ մի խոչընդոտ չի հարուցվի, և սա տարածվում է նրա և նրա ողջ ունեցվածքի վրա, ընդ որում նա պետք է ապացուցի, որ դա իրեն է պատկանում, իսկ այլ ազգային պատկանելության անձինք և նավը կհայտնվեն մեր՝ նրանց հետ համատեղ կառավարման ներքո»⁹:

Կիլիկյան թագավորների խրիստովուլներում պաշտպանվում էր նաև վենետիկցիների և ջենովացիների ժառանգության իրավունքը: Կիլիկիայում մահացած օտարերկրացիների գույքն անցնում էր պետական գանձարանին: Կիլիկիան վենետիկցիներին և ջենովացիներին շնորհած խրիստովուլներով հրաժարվում է այս սովորույթից հօգուտ վերջիններիս: Կիլիկիայում մահացած ջենովացիների և վենետիկցիների գույքն այլևս ենթակա չէր բռնագրավման, այլ պետք է անցներ պետական վերահսկողության տակ՝ այնտեղ մնալով այնքան ժամանակ, քանի դեռ համապատասխան իշխանություններն այն չէին պահանջել օրինական ժառանգների համար: Այսպես, 1201թ. Վենետիկին շնորհված խրիստովուլում ասվում է. «Շնորհում են նաև և կամենում, որ եթե որևէ վենետիկցի հանգամանքների բերումով մահանա իմ տարածքում և իր իրերի ու ապրանքների հետ կապված կարգադրություն կատարած լինի՝

դրանք հանձնելով իր համաքաղաքացիներից որևէ մեկին կամ մեկ ուրիշի, ապա մահացածի կարգադրությունը փոփոխման ենթակա չէ: Իսկ եթե մահանա առանց կարգադրություն կատարելու և եթե որևէ վենետիկցի ներկա գտնվի, ապա մահացածի իրերն ու ապրանքները կհանձնվեն վենետիկցուն, ով էլ որ նա լինի, առանց որևէ առարկության: Եթե վենետիկցին մահանա կարգադրություններ կատարելով կամ առանց կարգադրության և համաքաղաքացիներից ոչ ոք ներկա չլինի, նրա ողջ ունեցվածքը անարգել կերպով ի պահ կտրվի Հովհաննեսին՝ Միսի պատվարժան արքեպիսկոպոսին, հայոց մեծանուն թագավորի կանցլերին կամ նրա իրավահաջորդին՝ այնտեղ մնալով այնքան ժամանակ մինչև մահացածի ունեցվածքի հետ կապված կարգադրություն կլինի Վենետիկի, Դալմացիայի և Խորվաթիայի մեծանուն դոժից իր կնիքով կնքված նամակով, ինչը պետք է ի կատար ածվի առանց որևէ առարկության»¹⁰:

1245թ. և 1261թ. խրիստովուլներում ընդգծվում է, որ մահացած վենետիկցու ողջ ունեցվածքը պետք է գտնվի պետական վերահսկողության ներքո, քանի դեռ Վենետիկի դոժից¹¹ կամ Աքքայում գտնվող վենետիկի բայլից¹² մահացածի ունեցվածքի հետ կապված հանձնարարական նամակ չի ստացվել: 1271թ., 1307թ., 1323թ. խրիստովուլներում նույնպես առկա է միևնույն մոտեցումը, միայն այն տարբերությամբ, որ այս դեպքում մահացածի ունեցվածքի հետ կապված կարգադրությունները կատարվելու էին Վենետիկի դոժի և Հայաստանում Վենետիկի բայլի կողմից: Ջենովացիների ժառանգության իրավունքի հետ կապված 1288թ. դեկտեմբերին Լևոն III-ի կողմից Ջենովայի հանրապետությանը շնորհված խրիստովուլում նշվում է հետևյալը. «Եթե ջենովացին մահանա առանց կտակի, ապա մեր պաշտոնյաները չեն կարող նրան պատկանող իրերն իրենց վերցնել: Դրանք պետք է հանձնվեն վենետիկցիներին, որպեսզի տնօրինվեն համաձայն սովորույթի»¹³:

Կիլիկիայի թագավորությունը պաշտպանում էր նաև օտարերկրացիների գույքի ֆիզիկական անվտանգությունը: Մասնավորապես, Կիլիկիան պարտավորվում էր վերադարձնել իր տարածքում կողոպտիչների կողմից վենետիկցիներից և ջենովացիներից հափշտակված գույքը: Այս առնչությամբ 1201թ. ջենովացիներին շնորհված խրիստովուլում ասվում է. «Շնորհում են նաև և կամենում, որ եթե իմ տարածքում գտնվող որևէ չարագործ ջենովացուն կողոպուտի ենթարկի մինչև նրա՝ իմ երկրից դուրս գալը, ապա տուժած ջենովացին կարող է բողոքել իրեն կողոպուտի ենթարկելու առթիվ իրենից հափշտակված վերադարձնելու համար, որը մեր կողմից կվերադարձվի առանց որևէ պատճառաբանության»¹⁴: Իսկ վենետիկցիներին 1201թ. շնորհված խրիստովուլում նշվում է. «Եթե վենետիկցին իր ճանապարհորդության ընթացքում կողոպուտի ենթարկվի, ապա նրանից հափշտակվածը կվերադարձվի այնպես, ինչպես կջանայինք վերադարձնել մեր սեփականը»¹⁵: Կարևոր է նշել, որ այս դրույթը կրկնվում է նաև 1245թ., 1261թ., 1271թ., 1307թ., 1321թ. Վենետիկի Հանրապետությանը շնորհված խրիստովուլներում:

Կիլիկիայի հայկական թագավորությունում քավականին առաջադիմական լուծում էր տրված

օտարերկրացիների միջև ծագող վեճերի քննության իրավագործության հարցին: Կիլիկիան, ելնելով ժողովուրդների ավանդույթները հարգելու սկզբունքից, հաշվի առնելով վեճերի լուծման ազգային առանձնահատկությունները, օտարերկրացիներին շնորհել էր իրենց միջև ծագած քաղաքացիական վեճերը և միջնացնելու նկատմամբ կատարված թեթև հանցագործություններն ինքնուրույն քննելու իրավունք: Սակայն ծանր հանցագործություններին վերաբերող գործերի քննությունը հանդիսանում էր հայկական դատարանների բացառիկ իրավագործության հարց: 1215թ. Լևոն II-ի կողմից Ձենովայի Հանրապետությանը շնորհված խրիստոփոլյուն մասնավորապես շեշտվում էր Կիլիկիայի տարածքում ջենովացիների՝ անկախ դատարաններ ունենալու իրավունքն ըստ իրենց սովորույթների: Այնուհետև մատնանշվում էր, որ ջենովացիներն իրենք են լուծելու իրենց միջև ծագող վեճերը, բացառությամբ գողության և սպանության դեպքերի, որոնք արդեն քննվելու էին թագավորական դատարանի կողմից¹⁶: Հատկանշական է նաև 1201թ. Ձենովային շնորհված խրիստոփոլյուն սահմանված այն դրույթը, ըստ որի ջենովացիների և այլազգի անձանց միջև դատական հայցի դեպքում գործը քննվելու էր ջենովական դատարանում, եթե մեղադրվողը ջենովացի էր, և թագավորական դատարանում, եթե ջենովացին հայցվորն էր¹⁷:

Կիլիկիայի թագավորների կողմից Վենետիկի Հանրապետությանը շնորհված խրիստոփոլյուն վեճերի կցին նույնպես թույլատրվում էր լուծել իրենց միջև ծագող վեճերը, սակայն վեճերի կցին միջև գողության և սպանության դեպքերը, ինչպես նաև նրանց և հայերի կամ այլազգի անձանց միջև ծագող վեճերը և ծանր հանցագործություններին վերաբերող գործերը քննվելու էին թագավորական դատարանում: Այսպես, 1201թ. Վենետիկին շնորհված խրիստոփոլյուն ասվում է. «Բացի այդ, շնորհում են և կամենում, որ եթե իմ տարածքում վեճ ծագի վեճերի կցին միջև, ապա այն կարող է լուծվել վեճերի կցին կողմից, սակայն, եթե վեճը լուծվելու համար վեճերի կցին ոչ ոք ներկա չլինի, վեճը կլուծվի վերոնշյալ հարգարժան արքեպիսկոպոսի (Սիսի արքեպիսկոպոսի) կամ նրա իրավահաջորդ-

ների ներկայությամբ: Եթե վեճ ծագի վեճերի կցին և որևէ այլազգի անձի միջև և մարդ սպանվի, ապա դատաստանն իմ թագավորական դատարանում կլինի: Եթե այլ տեսակի վեճ ծագի վեճերի կցին և ցանկացած այլազգի անձի միջև, ապա դատաստանն իմ թագավորական դատարանում կլինի»¹⁸:

Այս մոտեցումը առկա է նաև Վենետիկին շնորհված մյուս խրիստոփոլյուններում: Ընդ որում, 1271թ. խրիստոփոլյուն նույնպես հաստիկ ընդգծվում է, որ գողության և սպանության դեպքերը պետք է քննվեն թագավորական դատարանի կողմից. «Եթե մեր տարածքում երկու կամ ավելի վեճերի կցին միջև վեճ ծագի, ապա գործը կքննվի Հայաստանում վեճերի կցին կողմից: Եթե վեճ ծագի վեճերի կցին և հայի կամ վեճերի կցին և այլազգի անձի միջև, կամ եթե տեղի ունենա գողություն կամ սպանություն, ապա գործը կքննվի մեր թագավորական դատարանում: Եթե գողություն կամ սպանություն կատարվի և կողմերից երկուսն էլ վեճերի կցին չլինեն, ապա գործը կքննվի թագավորական դատարանում: Եթե վեճ ծագի երկու վեճերի կցին միջև և համաձայնության գալու համար վեճերի կցին ոչ ոք ներկա չլինի, ապա գործի առթիվ պետք է դիմել Սիսի արքեպիսկոպոսին»¹⁹:

Կիլիկիայի հայկական թագավորությունը, մեծապես կարևորելով իր արտաքին առևտրատնտեսական հարաբերությունների ծավալումը, օտար պետությունների հետ այդ հարաբերությունների կայուն զարգացման հիմքում տեսնում էր փոխադարձ համագործակցության ամրապնդումը, ինչպես նաև իր տարածքում վերջիններիս հպատակների, հատկապես վաճառականների իրավունքների հարգումը և պաշտպանությունը: Միջնադարյան միջազգային հարաբերությունների համակարգում, որտեղ պետությունների կողմից օտարերկրացիների իրավունքների անտեսումը սովորական և օրինաչափ երևույթ էր, Կիլիկիայի պետության կողմից օտարահպատակների անձնական և սեփականության իրավունքների պաշտպանության հարցի կարևորումը ժամանակաշրջանի առումով առաջադիմական մոտեցում էր:

¹ Տե՛ս Կիլիկիայի հայկական թագավորության՝ Ձենովայի և Վենետիկի հանրապետությունների հետ կնքած մեզ հայտնի առևտրական պայմանագրերը կազմվել են խրիստոփոլյունի ձևով: Խրիստոփոլյուն (հուն. chrysgbullon - ոսկե կնիք) ի սկզբանե գործածվել են բյուզանդական կանցելարիայում որպես իրավական ակտի տեսակ: Խրիստոփոլյունի ձևով հրապարակվել են օրենքներ, կազմվել են հրովարտական, կնքվել են միջպետական պայմանագրեր: Դրանք լայնորեն շրջանառվել են նաև Կիլիկիայի հայկական թագավորության կանցելարիայում: Խրիստոփոլյուն առանձնանում են իրենց ձևակերպման հանդիսավորությամբ: Սովորաբար հաստատվում էին միապետի կողմից կարմիր քանաքով դրված ստորագրությամբ և ոսկե կնիքով:

² Տե՛ս Левин Д. История международного права, М., 1962. С. 30.

³ Տե՛ս Барсегов Ю. Отказ Армян от “Берегового права”, Պատմա-քաղաքագիտական հանդես 1(52), Եր. 1971, էջ 95:

⁴ Charles Langlois V. Le tresor des chartes d'Armenie, ou, Cartulaire de la chancellerie royale des Roupeniens, Le Tresor Des Chartes D'Armenie ou Cartulaire De La Chancellerie Royale Des Roupeniens, Venise, 1863, p. 106, «Undo, tibi Ogerio de Pallo, civi lanuensi, pro parte Ianuensium ante regiam majestatem et regiam curiam meam venienti, et requirenti, amorem, honorem et libertatem in regno meo, dono et concedo, assensu regalis curie mee, libertatem per terram et per mare eundi et redeundi, vendendi et emendi, intrandi in portum et exeundi de portu. Concedo etiam et volo ut omnes Ianuenses, cum rebus et mercimoniis suis, per totum regnum meum, in civitatibus, casalibus, in omni terra mea, quammmodo habeo, et quam, Deo ausiliante, acquisiturus sum, et in omni terra baronum meorum, sint salvi et securi ab omnibus hominibus qui sunt et qui erunt sub potestate et dominio meo; eant et redeant, vendant et emant, libere, quiete, sine omni contrarietate et servicio, sine omni dictione, sine omni pacto et sine omni exactione, seu angaria tributi vetigalis».

⁵ St'u Langlois V. Le tresor des chartes d'Armenie, p. 110, 111, «Ex regali itaque munificentia mea, ipsius requisitione, dono et concedo plenius ei omnibus que successoribus suis et omnibus Veneticis, amore et honore suo, omnium que Venetorum, sicut continetur in presenti privilegio, libertatem per terram et per mare in civitatibus, in portibus, in pontis, eundi et redeundi cum quibuslibet mercimoniis. [intrandi et exeundi cum quibuslibet mercimoniis]. Et habeant potestatem plenam vendendi et emendi quelibet mercimonia per totam terram meam, et extrahendi de tota terra mea, salve, secure, libere, quiete, sine omni servitio, sine omni dictione, sine omni angaria, et sine omni passagio... Corpora, res et mercimonia Venetorum sint salva et secunda ab omnibus hominibus qui sunt et qui erunt sub potestate et dominio meo... Concedo et volo, ut omnes Venetici habeant potestatem standi salvi et securi cum omnibus bonis suis, quamdiu voluerint, in omni terra mea et per totam terram meam».

⁶ St'u Langlois V. Le tresor des chartes d'Armenie, p. 114, «et nos confirmavimus ad petitionem eorum predictum privilegium, et dedimus nostrum omnibus Veneticis, qui sunt et qui futuri sunt; quod omnes mercatores et omnes homines Venetici, qui sunt ultra mare et citra, et veniunt in terram nostram, securi et sine timore sint a nobis et [ab] omnibus nostris, in omnibus locis qui sunt vel erunt sub dominio nostro, tam persone eorum, quam res et omnia sua bona, eundo et redeundo, vendendo et emendo, sine datione».

⁷ St'u Langlois V. Le tresor des chartes d'Armenie, p. 106, «Concedo insuper et volo, ut si naves Ianuensium in litoribus (sic) regni mei quoquo modo periclitari vel frangi, quod absit, contingant, corpora, res et mercimonia eorum sint salva et secunda ab omnibus hominibus qui sunt et qui erunt sub potestate et dominio meo; et ad Ianuenses redeant proprietatem, sine omni occasione et contrarietate. Et si forte constiterit naves aliarum gentium in littoribus regni mei frangi vel periclitari, in quibus aliquis Ianuensis cum mercimoniis suis fuerit, res et mercimonia que legitime fore sua, seu Ianuensium probare poterit, sint salva et secunda, et ad suam redeant proprietatem, sine omni occasione et contrarietate».

⁸ St'u Langlois V. Le tresor des chartes d'Armenie, p. 110, «Concedo etiam et volo, ut, si quodlibet vassellum Venetorum passum fuerit naufragium, vel rupturam in toto littore mei regni, omnes hii, qui evasserint de periculo illo, sint salvi et securi. Corpora, res et mercimonia eorum sint salva et secunda et libera ab omnibus hominibus, qui sunt et qui erunt sub potestate et dominio meo, hoc excepto, quod, si quis intersit, qui non sit Veneticus, ipsius res omnes potestati curie mee subiaceant. Et si navis seu vassellum aliarum gentium periclitata fuerit vel fracta in toto littore regni mei, et interfuerit Veneticus aliquis, res et omnia bona ipsius sint salva et secunda et libera ab omnibus hominibus, qui sunt et qui erunt sub potestate et dominio meo».

⁹ St'u Langlois V. Le tresor des chartes d'Armenie, p. 152, «E se vassiau de Veneze brise en toute nostre terre, en rive de mer ou en mer, tot quant che sera delivrn de la mer, soit home, vassiau ou autre chose, toute sera sans doute e sanz penser de nos e de nos subjns. E se home de autre nation ne autre chose, seront au vassiau chi brisera, si demorront e nostre comandement avec le leur. Et les Venetiens vassiau ne autre chose d'home d'autre nation ne prendront en leur garde ou delivreront come le leur. Et se autre manere de vassiau brise, en che y soit Venetiens, li Venetien soit franz et sans pene, luy e toutes ses choses lesqueles il provera che soient soues; e le vassiau e les homes d'autre nation demourront au nostre comandement avec le leur».

¹⁰ St'u Langlois V. Le tresor des chartes d'Armenie, p. 110-111, «Concedo similiter et volo, ut, (si) aliquis Veneticus aliqua predestinatione in terra mea morte preoccupatus fuerit, et bonorum suorum ordinationem fecerit, ipsamque in manibus Veneticis sen cujuslibet comiserit, et fuerit mortuus, ordinatio ipsa stabilis sit et firma; et si sine ordinatione facta, subito mortuus fuerit, et aliquis Veneticus interfuerit, res et bona mortui in manibus ipsius adstantis Venetici, quicunque sit, sine contradictione aliqua deveniant. Et si aliquis Veneticus non interfuerit, et cum ordinatione seu sine ordinatione facta, subito mortuus fuerit, omnia bona ipsius in manibus domini Johannis, venerabilis Sisensis archiepiscopi, illustris regis Armenie cancellarii, seu successorum suorum archiepiscoporum, sine aliqua contradictione deveniant; que tam diu sub custodia habeat, quousque ex mandato illustris ducis Yenetie, Dalmatie et Croatiae recipiat per litteras, tamen sigillo suo sigillatas; cui illa tradere et assignare debeat, seu quid super luis factorum sit; et secundum tenorem ipsarum litterarum predicti ducis mandatum de rebus mortui, sine aliqua contradictione adimpleatur».

¹¹ St'u Վենետիկի Հանրապետությունը գլխավորողի տիտղոսը (VIII- XVIII դդ.):

¹² St'u Այլ պետությունում Վենետիկի պաշտոնական ներկայացուցիչը, ով զբաղվում էր Վենետիկի և վենետիկցիների շահերի և իրավունքների պաշտպանության հարցերով:

¹³ St'u Langlois V. Le tresor des chartes d'Armenie, p. 157, «Si un Grnois meurt sans avoir fait de testament (ah intestat), nos officiers ne pourront mettre la main sur ses effets; la commune les prendra et en disposera suivant la coutume».

¹⁴ St'u Langlois V. Le tresor des chartes d'Armenie, p. 107, «Concedo denique et volo, ut si aliquis malefactor in terram meam venerit ad affidandum vel non affidandum, et Ianuensis depredatus fuerit antequam de terra mea exeat, Ianuensibus de ablatis juste conquerentibus ablata, pro posse restitui faciamus sine occasione».

¹⁵ St'u Langlois V. Le tresor des chartes d'Armenie, p. 110, «... et si aliquod dampnum in ipso itinere Venetico viatori evenerit, ad restituenda ablata, tanquam mea propria operam dare et studium».

¹⁶ St'u Langlois V. Le tresor des chartes d'Armenie, p. 126, «... dono et concedo in tota terra mea quam ego nunc habeo vel habiturus sum, liberam curiam, secundum morem et consuetudinem Janue, ut nullus Januensis, vel filius Januensis, aut aliquis dictus Januensis, teneatur in curia alicujus, nisi in curia Januensium, super offensione aliqua, nisi super excessu furti et homicidii respondere».

¹⁷ St'u Langlois V. Le tresor des chartes d'Armenie, p. 107, «Et si aliquis clamor factus fuerit contra aliquem Ianuensem, accusatus in curia Ianuensium, faciat justiciam. Et si Ianuenses, de quocumque alio alterius nationis clamorem fecerint, accusatus in regali curia mea, faciat justiciam».

¹⁸ St'u Langlois V. Le tresor des chartes d'Armenie, p. 111, «Concedo preterea et volo, ut, si aliqua contentio vel discordia in terra mea inter Venetos emerserit, ut per Venetos, si interfuerint, emendetur; qui si absentes fuerint, in presentia predicti venerabilis archiepiscopi, sive successorum suorum archiepiscoporum, previa ratione emendetur. Et si aliqua contentio vel discordia mortalis inter Venetos et quascumque gentes emerserit, et mors subito hominis irruerit, in regali curia mea per justicie sententiam decidatur. Et si aliqua alia contentio vel discordia inter Venetos et quascumque gentes emerserit, similiter in regali curia mea per iudicii sententiam finiatur».

¹⁹ St'ú Langlois V. Le trésor des chartes d'Armenie, p. 153, «E se entre deus Venetiens ou plusors sera contens en nostre terre, le bail de Venetiens chi sera en Ermenie faze la raisons. E se contens sera, entre Venetiens et Hermins ou home d'autre nation, chi ne soient Venetiens, ou se faze larecin on sanc, ou murtre, la raison de ce en (la) nostre roial ante cort se faze. Ensement, se entre les Venetiens, que les deus parties soient Venetiens, se faze murtre, ou sanc, ou larecin, la raison de ce en la nostre roial aute cort se faze. E se contens sera entre Venetiens, e che Venetiens n'y soit a acorder les ensemble, per la raison de l'arcivesque de Sis s'adressent».

РЕЗЮМЕ

О личных и имущественных привилегиях и иммунитетах, дарованных иностранцам по международным договорам, заключенным Киликийским армянским царством с Венецианской и Генуэзской республиками

Киликийское армянское царство, придавая большое значение расширению внешнеторговых связей и развитию экономических отношений страны, особое внимание уделяло защите прав иностранцев, в частности прав иностранных купцов, прибывающих в Киликию. В данной статье рассматриваются вопросы личных и имущественных прав, предоставленных подданным Венеции и Генуи на территории Киликийского царства по международным договорам, заключенным Киликийским армянским царством с Венецианской и Генуэзской республиками.

SUMMARY

The personal and property privileges and immunities granted to foreigners by the international treaties signed between the Armenian Kingdom of Cilicia and the Republics of Venice and Genoa.

The kings of Cilician Armenia, attaching great importance to the development of foreign trade and economic relations, have paid a special attention to the protection of rights of foreigners, especially foreign merchants arriving in Cilicia. The article examines the personal and property rights granted to Venetians and Genoese in Cilician Armenia by the international treaties concluded between the Armenian Kingdom and the Republics of Venice and Genoa.